

Բանկային հաշվի բացման և սպասարկման ամփոփագիր ֆիզիկական անձանց համար

1. Հաշվի բացման և փակման ժամկետները սահմանված են «Ամերիաբանկ» ՓԲԸ Հաճախորդների և բանկային հաշիվների բացման և փակման ընթացակարգում:
2. Բանկային հաշիվները բացվում են ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով, Էվրոյով, ՌԴ ռուբլով, շվեյցարական ֆրանկով, անգլիական ֆունտ ստերլինգով, կանադական դոլարով, ճապոնական իենով, ավստրալական դոլարով, ՄԱԷ դիրհամով, անկանխիկ ոսկով (999,9 հարգի), ինչպես նաև բանկի կողմից գնանշվող այլ արժույթով:
3. Բանկային հաշիվների բացման համար ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար անհրաժեշտ է անձը հաստատող փաստաթուղթ և հանրային ծառայությունների համարանիշ, ոչ ռեզիդենտների համար՝ անձը հաստատող փաստաթուղթ: ՀՀ դրամով բանկային հաշիվները բացվում են անվճար:

Արտարժույթով բանկային հաշվի բացման համար գանձվում է միջնորդավճար ըստ հետևյալի ¹ .	1,000 ՀՀ դրամ՝ յուրաքանչյուր հաշվի համար
1. Երևան քաղաքի Բանկի տարածքային ստորաբաժանումներում	
2. Երևան քաղաքից դուրս Բանկի տարածքային ստորաբաժանումներում	500 ՀՀ դրամ՝ յուրաքանչյուր հաշվի համար

4. Հաճախորդների համար Բանկում սահմանված կարգով հաստատվում է հաշվով գործարք կատարելու իրավունք ունեցող ներկայացուցչի (ներկայացուցիչների) ստորագրության (ստորագրությունների) նմուշի քարտ:
5. Բանկը հաճախորդի հետ կնքած հայտ-պայմանագրի հիման վրա և պայմաններով սահմանված կարգով և իր ներքին ակտերին համապատասխան՝ իրականացնում է հաշվի համալիր սպասարկումը և հաճախորդի հանձնարարությամբ այն բոլոր հաշվարկա-դրամարկղային գործառնությունները, որոնք արգելված չեն ՀՀ օրենսդրությամբ: Բանկային հաշվով իրականացվող ուղղակի գործառնություններից են հաշվարկադրամարկղային գործառնությունները, մասնավորապես դրամական միջոցների կանխիկ մուտք/ելքը, փոխանցումները, արտարժույթի փոխարկումները, ինչպես նաև Բանկի և հաճախորդի փոխադարձ համաձայնությամբ իրականացվող օրենքով չարգելված այլ գործառնություններ՝ բացառությամբ ոսկով առարկայագուրկ մետաղական հաշիվների, որոնցով իրականացվում են հետևյալ գործառնությունները՝

¹ Հաշվի բացման միջնորդավճար չի գանձվում ՀՀ դրամով հաշվի բացման դեպքում, ինչպես նաև ժամկետային, խնայողական ավանդ ներդնելիս, բրոքերային հաշիվ բացելիս: Բանկային ծառայություններից օգտվելիս ՀՀ դրամով բանկային հաշիվ բացելը պարտադիր է:

- 5.1. հաշվին անկանխիկ (ոչ նյութական ձևով) ոսկու մուտքագրում՝ Բանկի կողմից սահմանված գնանշման համաձայն Բանկից ոսկի գնելով կամ Հաճախորդի այլ կամ երրորդ անձանց առարկայագուրկ մետաղական հաշվից անկանխիկ փոխանցման միջոցով,
- 5.2. հաշվից անկանխիկ (ոչ նյութական ձևով) ոսկու ելքագրում՝ Բանկի կողմից սահմանված գնանշման համաձայն Բանկին ոսկի վաճառելով կամ Հաճախորդի այլ կամ երրորդ անձանց առարկայագուրկ մետաղական հաշվին անկանխիկ փոխանցման միջոցով,
- 5.3. ոսկու անկանխիկ առք և վաճառք Հաճախորդի՝ գործարքի էական պայմանները (գինը, կատարման ժամկետը և կշիռը) պարունակող հայտի հիման վրա,
- 5.4. անակցեպտ գանձումներ Բանկի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ երրորդ անձանց նկատմամբ Հաճախորդի պարտավորությունների կատարման համար:

6. Բանկի և հաճախորդի միջև կնքված պայմանագրով նախատեսված հաշվարկային և դրամարկղային գործառնություններն իրականացվում են հաշվի/ների մնացորդի սահմաններում՝ հաշվի առնելով բանկի սակագներով սահմանված միջնորդավճարների գումարները: Հաշվի նվազագույն մնացորդը և բանկային հաշվով իրականացվող գործառնությունների սահմանափակումները ներկայացված են ստորև և արտացոլված են ֆիզիկական անձանց համար «Ամերիաբանկ» ՓԲԸ Սակագներում (10RB PL 72-01-01):
7. Բանկային հաշիվների մնացորդների նկատմամբ Բանկը տոկոսներ չի վճարում:
8. Բանկային հաշվի վարման/պահպանման համար բանկը գանձում է միջնորդավճար՝ ըստ հետևյալի.²

1. Օրացուցային կիսամյակի ընթացքում հաճախորդի հաշիվներով նվազագույնը 150,000 ՀՀ դրամին համարժեք շրջանառության առկայության կամ հաշիվների միջին օրական մնացորդը 50,000 ՀՀ դրամը գերազանցելու դեպքում	Անվճար
2. Օրացուցային կիսամյակի ընթացքում հաճախորդի որևէ հաշվով 150,000 ՀՀ դրամից փոքր շրջանառության կամ հաշվի միջին օրական մնացորդը 50,000 ՀՀ դրամից պակաս լինելու դեպքում	1,000 ՀՀ դրամ յուրաքանչյուր օրացուցային կիսամյակի համար

9. Բանկային հաշիվներով գործառնությունները կատարվում են բանկային հաշվի արժույթով՝ բացառությամբ միջոցների փոխարկման գործառնությունների: Փոխանակումը կատարվում է այդ պահին Բանկի կողմից սահմանված փոխարժեքով:

² Հաճախորդի որևէ հաշվի շրջանառությունը (այդ թվում քարտային) տարածվում է հաճախորդի մնացած բոլոր հաշիվների վրա (այս դրույթը գործում է միայն միջնորդավճարի գանձման տեսանկյունից): Ընդ որում, եթե հաճախորդը ունի գործող քարտին կից քարտային հաշիվ միայն, ապա միջնորդավճարը չի գանձվում, իսկ փակված քարտին կից քարտային հաշվի դեպքում միջնորդավճարը գանձվում է: Միջնորդավճարը գանձվում է յուրաքանչյուր օրացուցային կիսամյակին հաջորդող երկու շաբաթվա ընթացքում: Նախորդ 12 ամիսների ընթացքում բոլոր հաշիվներով շրջանառության բացակայության դեպքում հաճախորդի հաշվով դեբետագրումը սահմանափակվում է յուրաքանչյուր օրացուցային եռամսյակին հաջորդող երկու շաբաթվա ընթացքում:

Նախորդ 12 ամիսների ընթացքում հաշվով շրջանառության բացակայության և մնացորդի զրոյական լինելու դեպքում հաճախորդի հաշիվը փակվում է յուրաքանչյուր օրացուցային կիսամյակին հաջորդող երկու շաբաթվա ընթացքում:

Հաշվի վարման միջնորդավճար չի գանձվում բրոքերային հաշիվներ ունեցող հաճախորդների դեպքում:

10. Բանկի կողմից հաշվի հեռակա սպասարկումը իրականացվում է հետևյալ կերպ՝

1. Հեռախոս – բանկ ծառայության միջոցով ³	Միանվագ 5,000 ՀՀ դրամ
2. Ինտերնետ-Բանկինգ/ Մոբայլ-Բանկինգ համակարգով ⁴ հաշիվների քաղվածքներ և գործարքներ դիտելու, գործարքներ կատարելու իրավունքով իրավունքով.	
2.1 Մեկանգամյա ծածկագիր գեներացնող սարքի օգտագործմամբ	միանվագ 3,000 ՀՀ դրամ՝ ներառյալ համակարգ մուտքագրվելու և գործարքներ հաստատելու համար մեկանգամյա ծածկագիր գեներացնող մեկ սարք
2.2 Ամերիա Թոքեն ծրագրային ապահովման կողմի օգտագործմամբ	միանվագ 1,000 ՀՀ դրամ ներառյալ համակարգ մուտքագրվելու և գործարքներ հաստատելու համար Ամերիա Թոքեն ծրագրային ապահովման մեկ կոդ
2.3 Ծածկագիր գեներացնող սարքի/Ամերիա Թոքենի, տրամադրում(կորցնելու կամ վնասելու դեպքում), սարքի տեսակի փոխարինում	3,000 ՀՀ դրամ

³ Հեռախոս-բանկ ծառայության շրջանակներում իրականացվում են հետևյալ գործարքները՝ ստորև նշված սահմանաչափերով՝

N	Գործարքի տեսակ	1 գործարքի սահմանաչափ (ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ)
1	ձայնային տեղեկատվության ստացում առկա հաշիվների վերաբերյալ՝ հեռախոսակապի միջոցով	սահմանաչափ չի կիրառվում
2	արտարժույթի առուվաճառքի գործարք կատարելու նպատակով գործարքի մեծության (ծավալի) և փոխարժեքի սահմանում (համաձայնեցում) Բանկի հետ հեռախոսակապի միջոցով	սահմանաչափ չի կիրառվում
3	ներբանկային փոխանցումներ հաճախորդի հաշիվների միջև	մինչև 10 000 000 ՀՀ դրամ
4	ներբանկային փոխանցումներ այլ հաճախորդի հաշիվներին	մինչև 10 000 000 ՀՀ դրամ
5	արտարժույթի անկանխիկ փոխարկում	մինչև 10 000 000 ՀՀ դրամ
6	ՀՀ այլ Բանկեր կատարվող փոխանցումներ, եթե հաճախորդը նշված փոխանցումն արդեն իսկ կատարել է	մինչև 5 000 000 ՀՀ դրամ
6.1	ՀՀ այլ Բանկեր կատարվող փոխանցումներ, եթե հաճախորդը առաջին անգամ է կատարում նշված փոխանցումը	մինչև 3 000 000 ՀՀ դրամ
7	միջազգային փոխանցումներ	մինչև 1 000 000 ՀՀ դրամ
8	կոմունալ վճարումներ	մինչև 1 000 000 ՀՀ դրամ

⁴ Բանկը յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար սահմանում է արտարժույթի առք և վաճառքի փոխարժեքներ, որոնք գործում են Բանկի աշխատանքային ժամերին: Հեռակառավարման համակարգերով հաճախորդների սպասարկման ընթացքում աշխատանքային ժամերից դուրս (մինչև ժամը 09:30 և ժամը 17:00-ից հետո), նաև ոչ աշխատանքային օրերին (այդ թվում նաև շաբաթ օրերին) ստացված արտարժույթի փոխանակման հայտերը Բանկի կողմից կարող են մերժվել:

11. Հաճախորդի կողմից ներկայացված պարբերական հանձնարարականների կատարումը և լիազորագրի տրամադրումը իրականացվում է հետևյալ սակագներով.

1. Հաճախորդների կողմից ներկայացված պարբերական հանձնարարականների կատարում ⁵	Անվճար
2. Ֆիզիկական անձ հաճախորդի կողմից լիազորագրի տրամադրում (Լիազորողի փաստացի ներկայությամբ)	3,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ

12. Բանկային հաշվին կանխիկ միջոցները մուտքագրվում են գումարի ներկայացման պահին:

13. Քարտային հաշիվներին, ինչպես նաև ժամկետային ավանդ ներդնելիս կանխիկ մուտքագրումը կատարվում է անվճար:

14. Կանխիկ միջոցների տրամադրումը իրականացվում է հաճախորդի կողմից գումարը ստանալու նախորդ աշխատանքային օրը ներկայացված հայտի հիման վրա, եթե գումարը գերազանցում է 30 մլն ՀՀ դրամը, 100,000 ԱՄՆ դոլարը և 30,000 եվրոն և 1 մլն ՀՀ դրամին համարժեք այլ արտարժույթը՝ մյուս արտարժույթների համար՝ Գլխամասային գրասենյակում: Երևան քաղաքի Բանկի տարածքային ստորաբաժանումների համար սահմանվում է հետևյալ սահմանաչափը՝ 20 մլն ՀՀ դրամ, 25,000 ԱՄՆ դոլար և 15,000 եվրո, իսկ Երևան քաղաքից դուրս Բանկի տարածքային ստորաբաժանումներում՝ 10 մլն ՀՀ դրամ, 20,000 ԱՄՆ դոլար և 10,000 եվրո: Երևան քաղաքից դուրս մասնաճյուղերի դեպքում նշված սահմանաչափը գերազանցող կանխիկի տրամադրումը իրականացվում է հաճախորդի կողմից հայտը ներկայացնելուց հետո մինչև 5 աշխատանքային օրվա ընթացքում: Այն դեպքում, երբ հաշվից կանխիկացումից հետո հաճախորդը փակում է բոլոր հաշիվները, և հաճախորդի մնացորդը փոքր է քան սակագներով սահմանված կանխիկացման նվազագույն գումարը, կանխիկացումից միջնորդավճար չի գանձվում:

15. Կանխիկ արտարժույթի տրամադրման միջնորդավճար չի գանձվում հետևյալ միջոցների կանխիկացման դեպքերում.

- ✓ ժամկետային ավանդներից գոյացած միջոցների, այդ թվում տոկոսագումարների դեպքում (բացառությամբ ժամկետից շուտ մարվող ավանդների)
- ✓ խնայողական ավանդների տոկոսագումարների դեպքում
- ✓ պարտատոմսերի գումարների այդ թվում արժեկտրոնի վճարման դեպքում՝ մինչև պարտատոմսի մարման ժամկետը պարտատոմսը պահպանելու դեպքում

16. Բանկային հաշվին անկանխիկ միջոցները մուտքագրվում են Բանկի թղթակից հաշվին գումարի մուտքագրման օրը: Բանկը սահմանում է վճարման հանձնարարականների ընդունման և կատարման հետևյալ ժամանակացույցը՝ հաճախորդի հաշվին փոխանցման ենթակա գումարի փաստացի առկայության պարագայում*.

Թղթային եղանակով ներկայացվող վճարման հանձնարարականներ				Բանկ-Հաճախորդ/Բնութենետ-Բանկինգ/ Մոբայլ բանկինգ համակարգերով ներկայացվող վճարման հանձնարարականներ			
				Հեռախոս – բանկ ծառայության միջոցով ներկայացվող վճարման հանձնարարականներ (բացառությամբ ներբանկային փոխանցումների)			
Ընդունում	Փոխանցում	Ընդունում	Փոխանցում	Ընդունում	Փոխանցում	Ընդունում	Փոխանցում

⁵ Պարբերական հանձնարարականում պարտադիր հստակ պետք է ներկայացված լինի գործարքի ամսաթիվը, արժույթը, գումարը, ստացողի անունը/հաշվի համարը:

ՀՀ դրամ	Մինչև ժամը 13:00	Նույն բանկային օրը	Ժամը 13:00-ից հետո	Հաջորդ բանկային օրը	Մինչև ժամը 14:00	Նույն բանկային օրը	Ժամը 14:00-ից հետո	Հաջորդ բանկային օրը
ԱՄՆ դոլար	Մինչև ժամը 16:00	Նույն բանկային օրը	Ժամը 16:00-ից հետո	Հաջորդ բանկային օրը	Մինչև ժամը 17:00	Նույն բանկային օրը	Ժամը 17:00-ից հետո	Հաջորդ բանկային օրը
Այլ արտարժույթ	Մինչև ժամը 15:00	Նույն բանկային օրը	Ժամը 15:00-ից հետո	Հաջորդ բանկային օրը	Մինչև ժամը 16:00	Նույն բանկային օրը	Ժամը 16:00-ից հետո	Հաջորդ բանկային օրը

***Ուշադրություն.** Ժամը 13:00-ից մինչ 15:00-ը թղթային եղանակով ներկայացված 50 մլն դրամը չգերազանցող վճարման հանձնարարականների (14:00-ից մինչև 15:15-ը էլեկտրոնային վճարման հանձնարարականների դեպքում) հիման վրա նույն բանկային օրը փոխանցում կատարելու համար գանձվում է 10,000 ՀՀ դրամ միջնորդավճար՝ յուրաքանչյուր վճարման հանձնարականի համար:

Քարտային հաշիվներից փոխանցումներ կատարելիս ֆիզիկական անձ հաճախորդների համար «Ամերիաբանկ» ՓԲԸ Սակագների 4-րդ գլխով սահմանված փոխանցումների միջնորդավճարներին գումարվում են նաև քարտային հաշիվներից փոխանցումների համար սահմանված միջնորդավճարները (տե՛ս ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ Քարտերի սակագներ (10 RB PL 72-56)):

17. Հաճախորդի պահանջով ՀՀ-ում կամ ՀՀ-ից դուրս կատարված գործարքների վերաբերյալ Բանկը կատարում է հարցում՝ գանձելով գումար՝ ըստ թղթակցի կողմից փաստացի ներկայացված ծախսերի, իսկ հաճախորդի դիմումի համաձայն վճարման հանձնարարականի տվյալների փոփոխումը և չեղյալ համարումը կատարում է ըստ հետևյալ սակագների.

1. ՀՀ դրամով փոխանցումների դեպքում	1 000 դրամ
2. Արտարժույթով փոխանցումների դեպքում ⁶	25 000 դրամ

18. Ինտերնետ-բանկինգ/ Մոբայլ Բանկինգ համակարգով հաճախորդի դիմումի համաձայն վճարման հանձնարարականի տվյալների փոփոխում և չեղյալ համարում.

1. ՀՀ դրամով վճարման դեպքում	500 դրամ
2. ՌԴ ռուբլով վճարման դեպքում	10 000 դրամ
3. Այլ արտարժույթով վճարման դեպքում ⁶	25 000 դրամ

19. Հաճախորդի վճարման հանձնարարականի հետ վերադարձ թղթակցից բանկի կողմից.

1. ՀՀ դրամ	Անվճար
2. ՌԴ ռուբլի	25,000 ՀՀ դրամ
2.1. Ինտերնետ-Բանկինգ/Մոբայլ Բանկինգ համակարգով ներկայացված հանձնարարականի դեպքում	10,000 ՀՀ դրամ
3. Արտարժույթ	25,000 ՀՀ դրամ

20. Բանկային հաշվից տեղեկատվական նյութերը և քաղվածքները տրամադրվում են հետևյալ սակագներով.

1. Մինչև 1 տարի վաղեմություն ունեցող քաղվածքի, քաղվածքի կրկնօրինակի կամ էլեկտրոնային ձևով պահվող այլ փաստաթղթի	անվճար
--	--------

⁶ Ի լրումն վերոնշյալ սակագնի՝ երրորդ կողմի ներկայացրած ծախսերը նույնպես ենթակա են փոխհատուցման հաճախորդի կողմից:

տրամադրում	
2. 1-3 տարի վաղեմություն ունեցող քաղվածքի, քաղվածքի կրկնօրինակի կամ էլեկտրոնային ձևով պահվող այլ փաստաթղթի տրամադրում ⁷	5 000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ յուրաքանչյուր փաստաթղթի համար
3. Թղթային ձևով պահվող փաստաթղթի կրկնօրինակի տրամադրում	5,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ յուրաքանչյուր փաստաթղթի համար
4. Տեղեկանքների տրամադրում	
4.1. 3 ամիս և ավել հաշվետեր հաճախորդներին	3,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ
4.2. մինչև 3 ամսվա հաճախորդներին	5,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ
4.3. Ինտերնետ-Բանկինգ/ Մոբայլ բանկինգ համակարգով/ Բանկի կայքով պատվիրելու դեպքում	1,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ
5. Տեղեկանք-երաշխիքներ	10 000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ
7. Քաղվածքի առաքում	
7.1 էլ-փոստով	անվճար
7.2 փոստով՝ ՀՀ տարածքում	անվճար
7.3 փոստով՝ ՀՀ տարածքից դուրս ⁸	համաձայն փոստային ծառայության կողմից ներկայացված ծախսերի

21. Հաշվում առկա դրամական միջոցները տնօրինելու հաճախորդի իրավունքը չի կարող սահմանափակվել՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվում առկա դրամական միջոցների նկատմամբ սահմանափակում կիրառելու (արգելադրելու), հաշվով գործառնությունները դադարեցնելու կամ Կողմերի միջև կնքված այլ պայմանագրով նախատեսված լինելու դեպքերի:

22. Բանկը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով ընդունված դատարանի որոշումը կամ վճիռը ստանալու և բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները տրամադրելու Բանկի պարտավորության մասին հաճախորդին 3 (երեք) բանկային օրվա ընթացքում տեղեկացնելու համար (գրավոր, բանավոր կամ էլեկտրոնային եղանակով):

23. Առանց հաճախորդի կարգադրության՝ հաշվում եղած դրամական միջոցները թույլատրվում է դուրս գրել դատարանի վճռով, ինչպես նաև օրենքով և հաճախորդի հետ կնքված պայմանագրերով սահմանված դեպքերում:

24. Բանկային հաշվի հայտ-պայմանագրից ծագած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են Կողմերի փոխադարձ բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

25. Բանկային հաշվի հայտ-պայմանագրի լուծման պայմանները, ինչպես նաև պայմանագրի լուծման դեպքում հաշվում առկա դրամական միջոցների մնացորդի նկատմամբ իրականացվող հետագա գործողությունները ներկայացված են «Ամերիաբանկ» ՓԲԸ կողմից ֆիզիկական անձանց բանկային ծառայությունների մատուցման հիմնական պայմաններում:

26. **Հայտարարություն.** Հաշիվը և դրանում եղած դրամական միջոցները տնօրինելու հաշվետիրոջ իրավունքները կարող են սահմանափակվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների կամ հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման:

⁷ Երեք տարուց ավելի վաղեմություն ունեցող քաղվածքների, դրանց կրկնօրինակների և այլ նյութերի (այդ թվում՝ տեղեկանքների, փաստաթղթերի, դրանց կրկնօրինակների, աուդիտորական հարցման պատասխանների) տրամադրումն իրականացվում է պայմանագրային հիմունքներով: Միջնորդավճարը չի գանձվում Բանկի կողմից տեղադրված POS տերմինալի գործողություններն արտացոլող հաշվից քաղվածքի տրամադրման համար:

⁸ Առաքումը կատարվում է ռեգուլյար փոստի միջոցով:

27. **Հայտարարություն.** հաշվետիքոջ դրամական միջոցների վրա թույլատրվում է բռնագանձում տարածել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով դատարանի վճռի հիմքով՝ ԴԱՀԿ ծառայության որոշման համաձայն: Բանկը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով ընդունված դատարանի որոշումը կամ վճիռը ստանալու և բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները տրամադրելու Բանկի պարտավորության մասին Հաճախորդին 3 (երեք) բանկային օրվա ընթացքում տեղեկացնելու համար (գրավոր, բանավոր կամ էլեկտրոնային եղանակով):

28. Բանկի և ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի միջև կնքված պայմանագրի համաձայն, Բանկը հրաժարվում է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից միայն այն գույքային պահանջների մասով, որոնց չափը չի գերազանցում 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, իսկ գործարքի գումարի չափը չի գերազանցում 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը: